ԱՅՑ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

(*հայ տուրիստի յիշողութիւններից*)

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

(*Շարունակութիւն* [1])

III.

ՏԱՍՆՈՒԹ ՕՐ ԿԱՐԻՆՈՒՄ

> *...Բնակեալ է կեանս իւրեանց*
> *իբրև ի թանձրամած խաւարի*
> *և ոգիքն արգելեալք ի մարմնի*
> *իբրև զկենդանի ի գերեզմանի...*
>
> ԵՂԻՇԷ։

Մենք գտնւում ենք Բարձր-Հայքի կենդրոնում, Կարին քաղաքի մօտ, աւելի քան 6000 ոտնաչափ բարձր ծովի մակերևոյթից։ Արև է և կէսօրից անց։ Շրջակայ բնութիւնը թաղւած է նոր եկած ձիւնի տակ։ Աջ ու ձախ բարձրաւանդակների վերայ զետեղւած ամրութիւնների միայն սրածայր երկար ցիցերն են երևում ձիւնի թանձր խաւի տակից։ Մեր առջև Կարինն է, իսկ աւելի հեռու՝ Կարինի դաշտը և յետոյ հօրիզօնում՝ սարերը։ Ահա՛ անցանք Թոփ-Դաղի մօտից և արդէն քաղաքի հաստ պարիսպների տակն ենք։ Այդ պարիսպների շարունակութիւնը աջ և ձախ կազմում են վիթխարի սարերի մի շարք։ Այնպէս որ մուտքը արևելեան կողմից թէ

---

1) Տե՛ս «Մուրճ»-ի 4 և 5 համարները։

դէպի քաղաքը և թէ Կարինի դաշտը փակւած է և ամուր պաշտպանւած։

Խալիլի և երկու ձիաւոր տաճիկների հետ, որոնք Դավաբօյնու սարը բարձրանալիս ընկերացան մեզ, անցայ պարսպի մէջ երևացող երկար կամարակապ անցքով և մտայ քաղաքը։ Դարբասների մօտ կանգնած էին տաճիկ պահապան զինւորներ, իսկ աջ կողմը գտնւող մի շինութեան առջև—մի քանի պաշտօնեաներ։ Ոչ ոք ինձ չ'արգելեց շարունակել ճանապարհս։ Բայց ո՞ւր դիմել այդ անծանօթ քաղաքում, ո՞րտեղ իջնել։

Հասան-ղալայի խաների պէս իջևաններից զզւել էի, իսկ թէ քաղաքում կայ փոքր ի շատէ մարդավարի տեղ մի քանի օր, գուցէ և շաբաթ ապրելու մինչև իմ Մուշ գնալս վճռւիլը՝ այդ չը գիտէի ոչ ես, ոչ էլ Խալիլը։ Ես մտաբերեցի Էջմիածնի բարեկամներիս խորհուրդը՝ Կարին հասնելուն պէս դիմել Սանասարեան վարժարանի պատւելի ուսուցիչներին, որոնց հիւրասիրութեան ու քաղաքավարութեան վերայ նոքա այնքան մեծ վստահութիւն ունէին, որ աւելորդ էլ էին համարել մինչև անգամ յանձնարարական նամակ տալու ինձ։ Վճռեցի դիմել այդ ազնիւ էֆէնդիներին և խնդրել, որ օգնեն ինձ Կարինի «հիւրասէր» հայերից մէկի տան մէջ մի յարմար սենեակ վարձելու։

—Դու տա՛ր ինձ ուղղակի հայոց մեծ մէքդէբը, որը շինել է մի հարուստ ռուսահայ, ասացի ես Խալիլին. (այդ կերպ միայն կարելի էր հասարակ տաճկին հասկացնել Սանասարեան վարժարանի մասին)։

Ուղեցոյցս ինձ տարաւ քաղաքի դռներից սկսւող մի լայն երկար փողոցով, որի երկու կողմից կամ բաց տեղեր էին կամ փլած պատերի ու տների մի շարք։ Թէև դեռ ցերեկւայ ժամի մօտ 2 էր, բայց փողոցներում չէր երևում եւրոպական քաղաքներին յատուկ շարժում ու կենդանութիւնը։ Ահա՛ անցնում ենք մի կարմիր-մոխրագոյն քարեայ տան առջևից, որի հարթ կտուրի վերայ կանգնած են մի քանի տաճիկ էֆէնդիներ. նոցա ծոյլ ու թմրած դէմքերը արտայայտում են բոլէական զարմանք ու հետաքրքրութիւն ինձ տեսնելիս։ Ես քշում եմ ձիս համարեա ամայի փողոցով, ուր հազիւ են պատահում մի երկու անցնող կամ ուղտապաններ իրանց այլանդակ անասուններով։ Ոչ մի կառք կամ սահնակ չի երևում։ Մտնում ենք մի փոքրիկ հրապարակ, ուր կանգնած են գիւղացիների սայլերը՝ լցած եզ ու գոմէշներով և բարձած յարդ, խոտ, աթար ու ցախ։ Սայլերի մօտ, հայ և տաճիկ շինականների շուրջը, աղմուկ հանելով խռնւում է փէսաւոր ամբոխը։ Սակարկութիւն անողները տաք-տաք վիճում են կամ իրար ձեռք բռնած ուժգին անվերջ թափահարում, որ նշանակում է թէ համաձայնութիւն կայացաւ։ Դէպի այս փոքրիկ, կեղտոտ շուկան ամեն կողմից նայում են իրար կողքի շարւած, առջևից բաց կրպակները, փռները ու ողորմելի արհեստանոցները։ Փողոցները և շուկան լիքն են մուսուլմանների առանձին հովանաւորութեան տակ գտնւող զզւելի շներով։ Անցնելով այդ շուկայից, մտանք մի մռայլ, նեղ փողոց, որը դուրս բերաւ ինձ քաղաքի համարեա հակառակ ծայրը։ Նոր փողոց բացւեց մեր առաջ, որը ճիւղաւորւում էր աջ ու ձախ։ Այդ նոր փողոցը մտնելիս դէմ ու դէմ կանգնած է մի երկյարկանի կարմիր-մոխրագոյն քարեայ շինութիւն, որի կամարաձև մուտքի գլխին հայերէն վերնագիրը ցոյց է տալիս, թէ դա հայոց առաջնորդարանն է։ Այդ շինութեան աջ կողմից շարունակւում էր մի բարձր պատ, որի միւս կողմից երևում էր Կարինի միակ հայոց եկեղեցին փայտեայ անշուք զանգակատնով։ Այնտեղ, ուր խրոխտ դէպի երկինք են բարձրանում ուղղահաւատների ջամիների մինարէները, այնտեղ պէտք է խոնարհած կուչ գայ ու մուսուլմանի աչքին չ'ընկնի քրիստոնէական եկեղեցու զանգակատունը։

Դեռ նոր էի մտել այդ փողոցը և առաջնորդարանի մօտից ուզում էի ծռւել դէպի փողոցի աջ ճիւղաւորութիւնը, երբ յանկարծ առջևս տնկւեց մի տաճիկ պաշտօնեայ։ Դա այստեղի «բօլիս-էֆէնդի»-ներից էր (ОБОЛОДОЧНЫЙ)։ Այդ կոլոլ, շէկ միրուքաւոր, լիքը կարմիր թշերով և կանաչ-մոխրագոյն աչքերով «բօլիսը» կանգնեցրեց ինձ և սկսեց հարց ու փորձ անել, թէ ո՞վ եմ, ո՞րտեղից և ո՞ւր եմ գնում։ Երբ ես գոհացում տւի նորա հարց ու փորձերին, նա ցոյց տւեց Սանասարեան վարժարանը, իսկ ինքը կանգնած նայում էր մինչև իմ տեղ հասնելը։ Փողոցի աջ ճիւղաւորութեամբ գնալիս, առաջնորդարանից սկսւող պատը շարունակւում է ձախ կռան վերայ։ Մի քիչ հեռանալով բօլիս-էֆէնդուց, կանգնեցինք բարձր պատի մէջ շինած ամուր մեծ դարբասների առջև։ Ես իջայ ձիուց և սկսեցի դուռը ծեծել։ Դուրս եկաւ մի երկարահասակ երիտասարդ և հարցրեց թէ ո՞վ եմ և ի՞նչ եմ կամենում։

Ես մի կերպ հասկացրի և նա հրաւիրեց ինձ վարժարանի «հիւրասենեակը»։ Պատուիրելով Խալիլին սպասել դրան մօտ՝ ինքս մտայ լայն մեծ բակը, որի մէջ տեղում բարձրանում էր մի երկյարկանի կոկիկ շինութիւն (առաջ ազգային օրիորդաց վարժարանն է եղել)։ Մենք անցանք դորա մօտից և դիմեցինք բակի մի անկիւնում գտնւող ուրիշ նոր շինութեան։

Մաքուր փոքրիկ նախասենեակի աջ անկիւնում երևում էին դէպի վերև տանող փայտեայ աստիճանները։ Իսկ մուտքի դէմ ու դէմ մի դուռ կար։ Իմ անծանօթ առաջնորդս մտաւ այդ դռնից և մի քանի վայրկեանից յետոյ բանալով ինձ ներս հրաւիրեց։ Դա հիւրասենեակն էր.—մի սիրուն, մաքուր և եւրոպական կոմֆորտով կահաւորած սենեակ, որի սպիտակ պատերին կախած էին գեղեցիկ շրջանակներում երկու մեծ պատկերներ՝ Մակար կաթուղիկոսի և Մ. Սանասարեանի։ Բարձր լուսամուտից թափանցում էր առատ լոյս։ Մի անկիւնում կանգնած էր մի գեղեցիկ պահարան գրքերով։ Սենեակի մէջ տեղում կանաչ մահուդով ծածկած էր մի մեծ սեղան, շուրջը սիրուն կոկիկ նստարաններ։ Սեղանի մօտ նստած էին մօտ 30 տարեկան երկու երիտասարդներ «ալաֆրանկա» իստակ, սև հագուստով, բարձր ալ ֆէսերը գլխներին։ Մենք ներկայացանք միմեանց։ Թխահեր էֆէնդին տաճկաց լեզուի ուսուցիչն էր, իսկ խարտեաշը (Ջելօդէյն)՝ ների ինձ շնորհալի պարոնը՝ մոռացել եմ թէ ի՞նչ առարկայի դասատու էր։ Երկուսն էլ կարծեմ Պօլսեցիք էին։ Դարբասի մօտ ինձ ընդունողը վարժարանի տնտես-կօշկակարն էր, որը իսկոյն հեռացաւ ծանուցանելու Մաղաթեան էֆէնդուն իմ մասին։ Դեռ նոր էր կցւել մեր խօսակցութիւնը, երբ յանկարծ շտապով ներս մտաւ սենեակը մի փոքրահասակ, երկար սև միրուքով, կապոյտ ակնոցներով մի պարոն՝ անգլիացի ջէնտըլմէնի պէս հագնւած և տաճկական բարձր ալ ֆէսը գլխին։ Դա վարժարանի երեք տեսուչներից գլխաւոր ղեկավարը՝ Յ. Մաղաթեանն էր։ Թէև ներկայանալով, ես պատմեցի ամենը, ինչ հարկաւոր էր իմ անձնաւորութիւնը ճանաչել տալու, բայց նա հազիւ կարողանալով սքօղել իւր անբաւականութիւնը և թերահաւատութիւնը, սպասում էր երևի մի որ և է յանձնարարական նամակի. իսկ ես, բացի իմ անցաթուղթից, ոչինչ շօշափելի և կասկածանք փարատող վկայագիր չ՚ունէի։ Հիմա եմ ափսոսում, որ տաճկաց պօլիցիայից առաջ, Յ. Մաղաթեանին չը ներկայացրի իմ անցաթուղթը։ Մենք կանգնած մնացած էինք։ Մաղաթեան էֆէնդին նկատեց.

—Խնդրեմ պ... նախ և առաջ գտէք ձեզ համար մի տեղ և տեղաւորւեցէք, որովհետև վարժարանի դրան մօտ ձիերով կանգնել չի կարելի, իսկ յետոյ՝ կը՛ տեսնենք...

—Ներողութի՛ւն, բայց հէնց այդ է պատճառը իմ այստեղ դիմելու, որ այնքան բարի գտնէք՝ իջեւանելու տեղ ցոյց տաք, կամ հիւրանոց, կամ մի որ և է հայի տուն։

Գ. Մաղաթեանը պատուիրեց կօշկակար Աւագին տանել ինձ մի ոմն Յովհաննէս աղա Աստուրեանի «խան»-ը։ Ես դուրս եկայ վարժարանից։ Անցնելով մի քանի սակաւամարդ փողոցներով, մտանք կրկին այն շուկան, որը արդէն տեսել էինք։ Դէպի այդ փոքրիկ հրապարակը նայում էր մի եռյարկանի կարմիր-մոխրագոյն քարից շինած տուն, որի միայն երրորդ յարկը ունէր դէպի շուկան նայող պատուհաններ։ Կամարաձև բաց մուտքի գլխին կախած յուշատախտակը կրում էր հետևեալ հայերէն բառերը. «Հիւրանոց, ընթերցարան և ճաշարան»։ Մտանք մի փոքրիկ բակ. ուղղակի մուտքի ձախ կողմում երևացող մութ սանդուղքների մաշւած ու ցեխոտած աստիճաններով բարձրացանք և դուրս եկանք երկրորդ յարկի փոքրիկ նրբանցքը, որի աջ պատում երևում էին չորս փոքրիկ անճոռնի դռներ, իւրաքանչիւրը միմի ճախարակով (блокъ), վրայից քաշ արած չւան, որի ծայրից կապած ծանրութիւնը փակել էր տալիս այդ մի փեղկեայ դուռը բանալիս։

Մշեցի ծառայ Հաջի-Ղազարը կանչեց վերևից (ընթերցարան-թէյարան-ղայֆէարանից) հիւրանոց պահող Յովհաննէս աղա Աստուրեանին։ Այդ յաղթանդամ, գեղեցիկ դեռ երիտասարդ տղամարդը մի տիպ էր խստաօդ Բարձր-Հայքի քաջառողջ հայերի, որոնք չը նայած դարերով կրած ամենաանտանելի, ծանր, մաշող պայմաններին, դեռ ևս չեն այլասեռւել։ Վերին աստիճանի քաղաքավարի և հրապուրիչ ձևեր ունէր պարոնը թէ խօսելիս և թէ վարւելիս։ Նա յայտնեց, որ երկու տեսակ «օդաներ» (սենեակ) կան. ներքևի յարկում յարմարութիւններից զուրկ և արժանագին, և երկրորդում՝ այնպիսի սենեակներ, որ տեսնում եմ այժմ և բոլոր այն յարմարութիւններով, որ կարելի է միայն Կարինում ցանկալ։ Պէտք է նկատել, որ այս հիւրանոցը մի քանի տարի է միայն որ բացուել է և միակն է իւր տեսակում Կարինի մէջ. իսկ առհասարակ այստեղի «խաները» շատ էլ հեռու չեն Հասան-ղալայում տեսածից։ Լաւ սենեակներից ազատ էին երկուսը. յարմարութիւնները և գինը հաւասար։ Սենեակի վարձը ամսական մի ոսկի ու կէս (14 ռուբլի) էր, օրեկան՝ 5 ղուրուշ։ Վառելիքը առանձին է կենողի հաշւով։ Ինքնաեռ չի տրւում, որովհետև ամբողջ հիւրանոցում միայն մի հատ է (Ռուսաստանից է բերւում), այն էլ թէյարան-ընթերցարանի համար միշտ հարկաւոր է։ Կամաց ակամաց պէտք է բոլոր պայմաններին ի հարկէ համաձայնուէի։

Ճախարակաւոր դուռը բացուեց, նորա ետևից գտնւող կապոյտ ներկած դուռը նոյնպէս և մենք, գլուխներս խոնարհելով, մտանք Էրզրում քաղաքի ամենալաւ հիւրանոցի ամենալաւ համարներից մէկը։ Իրերս ներս բերին։ Վերջացրի Խալիլի հետ հաշիւս (նորա վարձը մի ձիու համար Զվինից մինչև Կարին 50 ղուրուշ էր, մօտ 5 ռուբլի, կերակրելը և բոլոր ճանապարհի ծախսը ինձանից) և տալով նորան մի սպիտակ մէջիդիէ իբրև «բաշխիշ» ու մի նամակ յոյն «հէքիմբաշու» անունով, ճանապարհ դցեցի։ Տնտես-կօշկակարը նոյնպէս հեռացաւ և սենեակը մտաւ մշեցի ծառան՝ Յովհաննէս աղային յայտնելու, որ «մի մարդ կուզէ քեզի տեսնել վարը»։ Նորան կանչողը յետոյ բանից դուրս եկաւ, որ Սանասարեան վարժարանի վերոյիշեալ տնտես-կօշկակար էֆէնդին էր, որին պ. Մաղաթեանը յանձնարարել էր յայտնել Յովհաննէս աղային հետևեալը. «Աս ռուսահայը մեզի անծանօթ մէկն է. մենք նրան չենք ճանչնար. յանկարծակի եկաւ մեզի մօտ և կ'ըսէ թէ Ռուսիաէն է. Էջմիածնայ վարժապետներէ անունը կ'ուտայ, բայց նամակ մը չ'ունի. կասկածելի մարդ մը է. մարդասպան մը կերևի կամ չարագործ ու փախստական ոճն. իմացիր՝ անցաթուղթ ունի՞....» Այդ խօսքերի ազդեցութեան տակ Յովհաննէս աղան մտաւ կրկին սենեակս և չը կորցնելով իւր քաղաքավարական ձևերը, ասաց թէ պօլիցիան ճիշդ տեղեկութիւններ է պահանջում եկւորների մասին և ինքը, Յովհաննէս աղան, իբրև հիւրանոցի տէր, պարտական է վաղը անպատճառ յայտնել պօլիցիային, թէ ո՛վ է իր «միսաֆիրը» (հիւրը)։ Ես յանձնեցի նորան իմ անցաթուղթը, որի վերայ Կարսի տաճկական հիւպատոսը արել էր իւր նկատողութիւնները։ Հիւրանոցի տէրը ուշադրութեամբ քննելով և կարդալով անցաթուղթս համոզուեց երևի, որ ոչինչ կասկածելու բան չը կայ և որ Սանասարեանների երևակայութիւնը շատ մեծ թռիչքներ է գործում։ Մի քանի րոպէից յետոյ նա հեռացաւ՝ միամտացնելու Աւագին, ասելով թէ այդ մարդու բոլոր թղթերը կարգին են, օրինաւոր և օսմանեան հիւպատոսից ու սահմանագլխին, մաքսատնում, նշանագրուած։

Հիմա մի ծանօթութիւն տանք ընթերցողին Կարինի ամենաերևելի հիւրանոցի ամենաշքեղ համարներից մէկի մասին։ Ճախարակաւոր հասարակ և յետոյ կապոյտ փոքրիկ դռնից մտնում էք համարս. ուղղակի դռան հանդէպ սենեակի մի մասը բաժանուած է կապոյտ ներկած փայտեայ վանդակով, որի ետևից ընկած են մի քանի կոտրատած և անպէտք կահկարասիք ծածկած փոշիով։ Ամբողջ սենեակը 10 քայլ երկարութիւն ունէր և համարեա նոյնքան լայնութիւն։ Ցածր առաստաղը կապոյտ ներկած տախտակներից էր. պատերին կպցրած էին մոխրագոյն աժանագին պաստառներ։ Երեք պատուհան նայում էին դէպի նեղ փողոցը կամ, աւելի ճիշդն ասած, տների և բաղանիքների կտուրը, որովհետև փողոցը տեսնելու համար պէտք է մարդ ճակատը կպցնէր պատուհանի ապակիներին։ Իբրև լուսամուտների վարագոյրներ՝ ծառայում էին կարմիր շիլայի կտորներ։ Յատակը դժուար էր զանազանել՝ փայտի՞ց էր թէ հողից, այնքան անտաշ տախտակամածը չորացած ցեխից հողի գոյն էր ստացել։ Պատուհանների տակ, պատի բոլոր երկարութեամբ, մի կիսադիւանի պէս բան էր դրած՝ հասարակ չթի կտորով ծածկած, մի շարք խոտով լեցրած քառակուսի կոշտ բարձերով պատերին յենած։ Պատերից մէկի մօտ տեղացի արհեստաւորների ճաշակին համեմատ շինած մի գահաւորակ, միւսի մօտ՝ անկողնակալը և կողքին՝ մի սեղան երկու կոտրած հասարակ աթոռներով։ Սենեակի մէջ տեղում «սօբան» էր (երկաթէ վառարանը)։ Չընայած որ Կարինում ձմեռը երկար է լինում և խիստ, բայց և այնպէս, այնտեղի մարդիկ դեռևս ձմրան ոչ մի յարմարութիւնների տեղեակ չեն. ոչ գիտեն կրկնակի պատուհաններ շինել, ոչ էլ կարգին վառարաններ պատի մէջ։ Իմ սենեակումս ցրտից ես չէի կարող ոչ վերարկուս, ոչ էլ կրկնակօշիկներս ու գլխարկս հանել։ Երբ Հաջի-Ղազարը վառեց «սօբան», ծուխը լցուեց սենեակը և կուրացնում էր ու խեղդում. ծխնելոյզի մէջ ագռաւները բոյն էին դրել և փակել ծուխի համար անցքը, այնպէս որ պէտք է պատերից մէկը ծակէին և խառակելով ծուխի համար ճանապարհ բանային ծխնելոյզում։ Մինչ այդ բոլորը կատարւում էր, ես շրջելով Ներբանցքում տեղեկացայ հիւրանոցի միւս կենողների մասին։ Համարներից մէկում երկու ռուս ծառայողներ էին՝ չէրքէզի հագուստով. դոքա Օլթւայ կողմերից էին և ինչ որ պրիստաւների օգնականներ էին։ Տաճիկ տեղական վարչութիւնը խլել էր նոցա հրացանները և առանձին հսկողութիւն էր նշանակած նրանց վերայ։ Ռուսաց հիւպատոսարանի պահանջները անկատար էին մնացել. և մինչև որ բոլորովին չը հեռանային այդ մարդիկ Կարինից, նրանց հրացանները չէին վերադարձնելու։ Ներքևի յարկում կենում էր եգիպտական զօրքի մի գնդապետ, որին նոյնպէս հսկողութեան տակ էին պահում և արգելել էին Կարինից դուրս գալ, մինչև որ Եգիպտոս կառավարութիւնից տւած հեռագրին՝ թէ ի՞նչ մարդ է այդ զինւորականը՝ պատասխան չը գար։

Ժամի 6-ին, տեղական սովորութիւնների համեմատ, հիւրանոցը փակւում է և հիւրանոցի տէրը գնում է իւր տունը։ Դեռ ժամի 9 էր երեկոյեան. դուրսը մութն էր, պատուհանիս դէմ ու դէմ գըտընւող ջամիի բարձր մինարէն լուսաւորւած էր։ Ժամանակ առ ժամանակ թնդանօթի որոտներ էին լսւում. մահմեդական աշխարհը տօնում էր իւր մեծ մարգարէի ծննդեան օրը։ Մի քանի ժամանակից յետոյ հանգան ճրագները, դադարեցին որոտների ձայները և բնական խաւարը ու թմրութիւնը տիրեց այդ քաղաքին։ Մեռելային լռութիւնը ընդմիջւում էր ժամանակաւորապէս շների լեգէօնների կատաղի հաչիւնով, կամ հեռու պահականոցներից լսւող զինւոր-պահապանի փողի մելամաղձոտ ձայնով։

Վերջապէս հասայ ուրեմն Կարին։ Մինչև այժմ տեսած և լըսածս միայն անսահման թախիծ, վիշտ և մորմոք էին յարուցանում իմ մէջ, բայց դեռ շատ բան անորոշ էր ինձ համար։ Ես քնեցի, յուսալով որ շուտով ամեն բան կը պարզւի ինձ համար և գուցէ մխիթարական կողմեր ևս ցոյց տայ Կարինը թիւրքա-հայերի կեանքի վերաբերեալ...

Միւս օրը, ուրբաթ նոյեմբերի 4-ին, առաւօտեան ժամի 10 էր, երբ ես բարձրանում էի փոքրիկ նրբանցքի մի ծայրին երեւող հին, մաշուած սանդուղքներով վերեւի յարկը՝ ընթերցարան-թէյարանը։ Դուռը բանալով մտայ մի նեղ և երկար դահլիճ։ Այդ դռնից աջ մի այլ դուռ էր երեւում, որը տանում էր դէպի մի փոքրիկ սենեակ, ուր թէյ և ղայֆէ էր պատրաստւում, նարգիլէներն էին շարուած և այն, մի խօսքով ծառաների և պատրաստութիւնների համար սենեակ էր դա։ Սորա կից պատի խորութիւնում «բուֆէտն» էր. դարանների (полка) վերայ շարուած էր մի քանի շիշ ռոմ, ծխախոտի կապոցներ և արկղիկներ, ապակեայ բղուղներ (банка) քարի պէս կարծրացած նկանակներով (лепешка) կամ աղանձած «փստաբադամով»։ Դահլիճի հակառակ պատը նայում էր դէպի շուկան իր բազմաթիւ մեծ պատուհաններով, որոնցից իւրաքանչիւրի վերեւից կախած էին կարմիր վարագոյրներ։ Պատուհաններին դրած էին խեցիկներ ծաղիկներով։ Պատերը ծածկուած էին հասարակ պաստառներով։ Տախտակած առաստաղը կապոյտ գոյնով էր ներկուած, ինչպէս և պատուհանների բոլոր փայտեայ մասերը։ Տախտակամածը դժուար էր զանազանել գետնից՝ այնքան չորացած ցեխ կար վրան։ Դահլիճի մէջտեղում զետեղուած էր «սօբան», դահլիճի երկու ծայրին՝ մի մի մեծ բիլլիարդի սեղաններ։ Պատերի մօտ շարուած էին մի կարգ աթոռներ և գահաւորակներ՝ առաջներին դրած սեղաններ, մարմարաշէն երեսներով։ Դահլիճի ճակատը զարդարուած էր Փադի-Շահի՝ Սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի՝ իւղանկար պատկերով շրջանակում, որը կախուած էր պատին կպցրած կոլոլ կտրած կապոյտ կտաւի կտորի մէջ տեղում։ Այդ արուեստական երկնքի վերայ ոսկեզօծ և արծաթեզօծ թղթերից լուսին և աստղեր էին կտրտուած և կպցրած կտաւից, շրջանակի չորս բոլորը։ Փադի-Շահի պատկերի երկու կողմից կախած էին մի մի մեծ հայելի։

Դահլիճում բաւական մեծ բազմութիւն կար։ Ես անցայ և նստեցի մի անկիւնում ու թէյ պատուիրեցի ինձ համար։ Չը նայած որ առաւօտ էր, այնու ամենայնիւ երկու բիլլիարդի սեղանի շուրջը ես կանգնած էին երկար փայտերը ձեռներին անգործ հայեր և տաճիկներ և աղմուկ-գոչիւնով բիլլիարդ էին խաղում։ Տաճկաստանում ամեն բան գլխիվայր է. օրւայ այն ժամանակը, երբ կրթուած երկլիրներում գործով են զբաղուած—այստեղ անգործ էֆէնդի ու աղաները զւարճանում են. իսկ երբ եւրոպացիք օրական աշխատութիւնից յետոյ երեկոները գնում են զանազան կլուբներ, թատրոններ, կօնցերտներ և այլն՝ զւարճանալու ու հանգստանալու, տաճկաստանցիք կամ, հետեւելով հաւերի ու աքլորների օրինակին, փակւում են իրանց տներում և կամ... բաղանիքներում տաճկական զւարճութիւններ են անում...։ Տաճիկները չեն հաւանում «ալաֆրանկա» (եւրոպական) ժամերի հաշիւը. Նրանց մօտ երբ արեւը մայր է մտնում, վերջանում է և օրը և լրանում է 12 ժամը և յետոյ էլի սկսւում է նոր հաշիւ։ Որովհետև արեւի մայր մտնելը տարւայ մէջ հաստատ և միշտ նոյն ժամում չի լինում, այլ փոփոխւում է՝ այդ պատճառով չի էլ կարելի ասել թէ տաճկական ժամի 12-ը ճիշդ «ալաֆրանկա» ժամի ո՞րն է. Նոյեմբերին դա մօտաւորապէս հաւասար է ժամի 5-ին։ Բիլիարդ խաղալը միակ թոյլատրուած զւարճութիւնն է Կարինում։

Երբ Ներսէս պատրիարքը կենդանի էր, այստեղի հայերը փոքր առ փոքր սկսել էին զարթնել մտաւոր-բարոյական թմրութիւնից։ 1879 թւականին թատրոնական ընկերութիւն էր կազմել, ներկայացումներ էին տալիս, մատենադարան էին ուզում բանալ, մինչև անգամ տպարան և լրագիր էլ էին կամենում ունենալ, բայց... «կորեաւ ժողովողն, թագեաւ նաւահանգիստն, ելիք օգնականն, լռեաց ձայնն յորդորեցուցիչ... բարձաւ քահանայապետն, որ զերասանակս ի բուռն առեալ՝ ուղղէր զդէմսն, և սանձահարէր զլեզուս օտարաձայնս...»։

Թէ մեծ և թէ փոքր, թէ հարուստ և թէ աղքատ Կարինում բիլիարդ են խաղում։ Սրճարանում յաճախ կարելի է պատահել տաճիկ մսագործներին անգամ, որոնք իրանց գործը մի քանի ժամով թողնում են և կեղտոտ ցնցոտիները հագներին վազում են ու մտնում ղայֆէարան-ընթերցարանը մի մի ֆինջան ղայֆէ խմելու և բիլիարդ խաղալու։ Բոլոր տարածը կամ տարւածը հաշիւ մի քանի կոպէկի է հասնում։ Տարւողը մի քանի փարա պէտք է վճարի հիւրանոցի տիրոջ և, պայմանին նայած, բացի այդ (աւելի ունեւորները) մի քառորդ հօխա աղանձած «փստաբադամ» կամ 10—20 հատ «ցիգար» (պապիրօս) վերցնի բուֆէտից և տայ տանողին։ Ծիծաղելի է տեսնել, թէ ինչպէս մի որ և է խրոխտ գայմագամ (գլխապետ) կամ սպայ ածում է իւր թաշկինակը մի քանի փարայի տարած ապանձած «փստաբաղամը», և ուրախ ուրախ, յաղթական գոչիւններ արձակելով հեռանում է դահլիճից։ Երկիրս աղքատ լինելով, սարսափելի տգիտութեան և անկարգութեան շնորհիւ փողն էլ թանգ է. չը նայած որ մի բաժակ թէյը կամ ղայֆէն 10 փարա (2 կոպ.) արժէ, այնու ամենայնիւ այդ խրոխտ տաճիկ հազարապետները, հարիւրապետները, յիսնապետները ու գայմագամները չեն կարող միշտ վճարել խմած մի երկու բաժակի համար. և ամեն մէկը այդպիսով 3—4 ոսկու պարտք ունի չը վճարած հիւրանոցի տիրոջ. Նա էլ չի կարող պահանջել. պէտք է հաճոյանալով, շողոքորթութիւններ անելով սպասի մինչև որ տաճիկը բարեհաճի ամսականը ստանալիս գոնէ մի ոսկի վճարել [1]։ Բայց դեռ Կարինի հայերը փառք են տալիս Աստուծուն, որ գոնէ մաս մաս, շողոքորթելով ստանում են իրանց փողերը, իսկ գաւառներում, Մուշի և ուրիշ կողմերում, տաճիկը ինչ որ ուզի, կարող է վերցնել և ինչ բարեհաճի՝ այն կը վճարի և «գեավուրը» ծպտուն հանել չի կարող, թէ ոչ—սրի հարւածը կամ ծեծը կը լինի նրան պատասխան։ Մուշի կողմերում բացի քրդերի բարբարոսութիւնից, տաճիկների հարստահարութիւնները նոյնպէս անտանելի են. հայ արհեստաւորին, բանւորին ամեն տաճիկ իրաւունք է համարում հարկադրել ձրիապէս իւր համար աշխատելու։ Մոլեռանդութիւնը և սարսափելի տգիտութիւնը թոյլ չեն տալիս տաճկին մի րոպէ մտածել անգամ թէ «գեավուրն» էլ իւր պէս մի մարդ է, և գուցէ իրանից առաւել ևս օգտակար հպատակ կառավարութեան։

Այդ դահլիճը միևնոյն ժամանակ և «ընթերցարան» է. այդտեղ ստացւում է Պօլսից 1 հայերէն լրագիր՝ «Արևելք», 2 տաճկերէն թերթ և 1 ֆրանսերէն-անգլիերէն լրագիր (Oriental Advertiser)։ Ահա բոլորը, ինչ որ ստացւում է «ընթերցարանում». ոչ մի գիրք չը կայ։ Չը նայած որ ուրիշ երկիրներում մի սովորական բան է, որ թէյարանները, կաթնարանները, գարեջրատները և այլն ստանում են յաճախողների համար մի-երկու թերթ, առանց այդ տեղերին «ընթերցարան» անունը տալու կամ պահողներին «տիրեկտոռ», ինչպէս Երզրումում. այնու ամենայնիւ պէտք չէ զարմանալ, քանի որ տաճկաստանցիներին մնում է գոնէ մեծ մեծ անուններով մխիթարուել։ Պոլսի հայերից ի՞նչ կարող են սովորել գաւառացիք։ Այդ ազգային մեծ ապուշանոց-գժանոցում (և ոչ «մտաւոր մեծ կենտրոնում», ինչպէս իրանց են կոչում պոլսեցիք) ամեն բան սահմանափակւում է փքուն, գեղեցիկ խօսքերով. «սահմանադրութիւն», «յառաջադիմութիւն», «մտաւոր շարժում», «մեծ ազգասէր», «մեծ հանճար», «երևելի քաղաքագէտ էֆէնդի» և այն և այն խօսքերը նոյն նշանակութիւնը ունին պոլսեցիների համար, ինչ որ պարծենկոտ երեխաների համար մեծերից լսած և առանց հասկանալու արտասանող բառերը։ Երբէք չի էլ կարելի հաւատալ պոլսեցիների անկեղծութեան, երբ նրանք կոկորդիլոսի արտասունքներ են թափում Թիւրքա-Հայաստանցիների թշուառութիւնների վրայ. որովհետև շատ են տգէտ, փչացած և չնչին, որ կարողանան խորը զգալ, իրերի դրութիւնը ըմբռնել և մի գործ կատարել։ Ի՞նչ շինեցին նոքա ահա 30 տարի է իրանց «ազգային սահմանադրութիւնով» և «ազգային ժողովով», ուր մի կարգին մարդ չը կայ և բոլորը զանազան սեղանաւորներ, վաճառականներ և պաշտօնեայ էֆէնդիներ կամ թեթևսոլիկներ են։ Եւ եթէ ուզելու լինինք իմանալ այդ անամօթ ժամավաճառների և անսիրտ էֆէնդիների արածների արդասիքը, պիտի տեսնենք որ կամ վնաս է եղել, կամ մի մեծ զրօ և կամ անմիտ ճառերով և գովասանքներով լեցրած թղթերի տոպրակներ։ Բայց թողնենք այդ...

---

[1] 40 փարան մի ղուրուշ է (մօտ 10 կոպ.), իսկ 103 ղուրուշը մի օսմանեան լիրա (ոսկէ Մէջիտիէ)։

Գահաւորակներից մէկի վերայ կիսապառկած էր մի տաճիկ մօլլա և չիբուխը քաշելով կիսաձայն կարդում էր մի տաճկերէն թերթ։ Մի սեղանի առջև նստած էր մի տաճիկ սպայ և այս ու այն կողմ էր շուռ տալիս մի այլ տաճկերէն թերթ։ Յոյն դեղագործներից մէկը խորասուզուած էր անգլիերէն-ֆրանսերէն լրագրի ընթերցանութեան մէջ. ինձնից ոչ այնքան հեռու մի սեղանի առջև նստած էր «ալաֆրանկա» հագնուած, ֆէսը գլխին, սև միրուքաւոր և ակնոցները քթին մի հայ էֆէնդի և «Արևելք» էր կարդում ու նարգիլէն ծծում։ Բայց ահա՛ ներս մտաւ մի շնորհալի կերպով հագընւած արտաքուստ եւրոպականացած էֆէնդի և այդ երկուսը սկսեցին ֆրանսերէն կօտրատել. երեւում էր, որ դոքա պօլսեցիների ջրից էին խմել և նրանց հացից կերել... Բոլոր յոյները իրար հետ միմիայն յունարէն էին խօսում, թէև նրանց մէջ էլ կային Պօլսում ուսում առածներ. բայց միայն հայի յատկութիւնն է՝ շուտ մոռանալ իւր լեզուն։ Տեղացի հայերից նոքա, որոնք Պօլսի մթնոլորտում չեն ապրել և Ֆրանսիայում չեն եղել, խօսում են հայերէն իրար հետ, բայց ընդհանրապէս տիրող լեզուն տաճկերէնն է։

Դահլիճում բազմաթիւ էին պարապ նստած և խաղացողներին դիտող մարդիկ։ Յոյն Կօստի անունով ծառան, որը հիանալի խօսում էր հայերէն, այս կամ այն կողմն էր գնում, սրան-նրան ղայֆէ կամ թէյ մատուցանում, նարգիլէ բերում։ Բիլիարդի սեղաններից մէկի մօտ կանգնած էր Յովհաննէս աղան և պատից կախած համրիչի վերայ խաղի հաշիւը պահում։

Ահա՛ մտաւ սենեակը մի մշեցի պատանի սևացած հիւծեալ դէմքով, նիհար երկար մարմինը ցնցոտիների մէջ փաթաթած, գլխին դրած մի պատառոտած արախչի. նա ուսերի ետևից ձգած ունի մի արկղիկ՝ կօշիկներ սրբելու պարագաները մէջը։ Այդ «բօյաչին» մի քանի փարայով ցանկացողների կօշիկներն էր սրբում։ Նա մտաւ դահլիճը, երկիւղածութեամբ մի անկիւնում կանգնեց և սկսեց պտտեցնել իւր հայկական մեծ մեծ, հեզ ու թախծալից սև աչքերը։ Յոյն մաքրասէր դեղագործ էֆէնդիներից մինը կանչեց նորան և մեկնեց իւր ոտները. մշեցին չոքեց նորա ոտների տակ, հանեց ուսից արկղիկը, նրա միջից էլ պարագաները և խնամքով բարձրացնելով էֆէնդիի ոտը՝ դրեց արկղիկի վերայ ու սկսեց սրբել։ Հայը իւր բնիկ երկրում հանգիստ ու ապահովութիւն չը կարողանալով գտնել և ամաչելով մուրալուց, պանդխտութեան մէջ ամեն աշխատանք յանձն առած՝ իւր համար մի կտոր հաց է ճարում. — Իսկ եկւոր տաճիկը, որը իւր անընդունակութեամբ և բարբարոսութեամբ սնանկութեան մատնելով երկիրը ինքն էլ քաղցածութիւնից մեռնում է՝ լաւագոյն է համարում դժւար տեղը ընկած ժամանակը մուրալ. և ճիշդ. մինչ ես դիտում էի մշեցուն, դահլիճի դուռը բացւեց և ներս մտան երկու առողջ, բայց աղքատ տաճիկներ, որոնք սկսեցին մօտենալ բոլորին և ողորմութիւն խնդրել. տւողները էլի հայեր էին...

Ես թէյս վերջացրել էի, երբ սենեակը մտաւ մի պօլիցիական. դա երեկւայ շիկահեր «բօլիսը»՝ Ալի-էֆէնդին էր։ Նորան տեսնելով Յովհաննէս աղան, իսկոյն մօտեցաւ, շողոքորթական ձևերով բարևեց և հրամայեց ծառային էֆէնդու համար ղայֆէ բերել. ի հարկէ, կերած-խմածի համար «բօլիս-էֆէնդին» ոչինչ չի վճարում։ Նա կիսաձայն մի բանից հարց ու փորձ էր անում հիւրանոցի տիրոջ և ժամանակ առ ժամանակ դէպի իմ կողմը նայում։ Յետոյ վերկենալով, Յովհաննէս աղայի հետ մօտեցաւ ինձ։ Հիւրանոցի տէրը ասաց ինձ, թէ Ալի-էֆէնդին ցանկանում է տեսնել իմ անցաթուղթը։ Առհասարակ սովորութիւն է այստեղ բաւականանալ հիւրանոցի տիրոջ մատեանում նշանակւածով «միսաֆիր»-ի մասին. բայց այժմ կասկածոտ տաճիկը ուզում էր իւր աչքերով տեսնել իմ թղթերը։ Ես տւի իրան. նա քննական աչքով զննեց, յետոյ դրպանից մի թուղթ հանեց ու սկսեց ինչ որ գրել։

—Կարելի՞ է ձեր անցաթուղթը տանել սարայը (կառավարչական տուն), հարցրեց նա։

—Ինչու չէ, եթէ շուտ կը վերադարձնէք, որովհետև իբրև ռուսահպատակ՝ պէտք է ներկայացնեմ ռուսաց հիւպատոսարանին, պատասխանեցի ես։

—Անպատճառ վաղը կը բերեմ։ Ինչո՞ւ էք եկել Երզրում, յանկարծ հարցրեց նա։

—Գնալու եմ Մուշի ս. Կարապետ ուխտ։

—Այսպէս ո՛ւշ։

—Հանգամանքները չը ներեցին աւելի շուտ, և ի՛նչ զարմանալու բան է, քանի որ դուք գիտէք, որ մի երկու օր ինձնից առաջ մի ռուսահայ այստեղից ճանապարհ ընկաւ ս. Կարապետ։

Յովհաննէս աղան, որը օգնում էր ինձ դժւար ընկած տեղը տաճկերէն խօսելիս, յիշեցրեց «բօլիսին» այն Նոր-Նախիջևանցի վաճառականի մասին, որը մի երկու օր էր միայն, որ գնացել էր ս. Կարապետ և կրկին պիտի վերադառնար։

—Լա՛ւ, դարձեալ հարցրեց Ալի-էֆէնդին, բայց ձեր անցագրում Կարսի մեր հիւպատոսը գրել է, որ նախ Վան էք գնալու և յետոյ դէպի Կարին անցնելու։

—Ես ճիշդ որ առաջ այդպէս էի մտադիր ս. Կարապետ գնալ, բայց ընկեր չը գտնելով ուղղակի Վան գնալու, եկայ որ այստեղից անցնեմ ս. Կարապետ։

—Իսկ յետոյ ո՞ւր պիտի գնաք։

—Որովհետև ուշացայ, գուցէ ուղղակի ս. Կարապետից վերադառնամ Էրզրում, բայց շատ կարելի է, որ դէպի Վան էլ գնամ։

—Եթէ վերադառնաք այստեղ, յետոյ ո՞ւր պիտի գնաք։

—Տրապիզօ՛ն, Ստա՛մբուլ, Ֆրա՛նգստան, Գերմանիա և ուր քէֆս է... պատասխանեցի համբերութիւնս հատած ու դուրս եկայ դահլիճից, վերջ դնելու համար անթիւ հարցերին։

Պօլիցիական կազմակերպութիւնը նոր է Կարինում. հայերի երևակայական շարժումների արմատները որոնելու համար են «բօլիսները»։ Քաղաքի ամեն մի թաղ ունի երկու «բօլիս» (околодочный) ու մի «բաշ-բօլիս» (полицейскій приставъ). Հասարակ պօլիցիականներ (городовой) չը կան։

Ես դուրս եկայ հիւրանոցից ու սկսեցի շրջել քաղաքում։ Կարինի ամենամեծ և խստակ փողոցը այն է, ուր գտնւում են եւրոպական զանազան հիւպատոսարանները, բողոքական միսիօնարների ուսումնարանը և տունը։ Ամերիկացի միսիօնարների վարժարանի շինութիւնը և իրանց միսիօնարների բնակարանը ռուսաց հիւպատոսարանի տան հետ, որը պատկանում է մի ռուսահայ Մ.-ին, քաղաքիս ամենալաւ տներիցն են։ Նոյն փողոցում կան ուղտերի համար խաներ, որոնց առջև փողոցի մէջ տեղում դիզւած են այդ անասունների կղկղանքի բլուրներ, որոնց վերայ բազմած են լինում շների ընտանիքներ իրանց լակոտներով։ Այդ Կարինի «պրօսպեկտօ»-ի վերայ գտնւող տներից շատերը ողորմելի աւերակների են նման։ Եթէ այդ տաճկական անճոռնի ճաշակով շինած տները մի քանի յարկանի են՝ առաջի յարկը բոլորովին զուրկ է լուսամուտից կամ մի երկու թղթածածկ դռնակներ ունի, երկրորդ յարկը պատշգամբաբար դուրս է պրծած դէպի փողոցը և թէպէտ պատուհաններ կան, բայց շատ քիչերը ունին ապակիներ, այլ կամ թղթով են ծածկւած լինում կամ փայտեայ վանդակներով ու տախտակներով։ Լուսամուտները պատի մէջ շինւած են առանց որ և է սիմետրիայի, մինը մեծ, միւսը փոքր, մէկը վերև, միւսը ներքև։ Եթէ լինում է երրորդ յարկ, նա էլ երկրորդի վերաբերեալ նոյն կերպ է շինւած լինում, որպէս երկբորդը առաջինի, այսինքն՝ պատշգամբաբար երկրորդի վերայ առաջ է դուրս պրծած։ Քաղաքի ծուռ ու մուռ փողոցներից շատերը այնքան նեղ են, որ մի բեռնած անասուն անցնելիս համարեա տեղ չի մնում կողքերից։ Մի քանի փողոցների տներն ու պատերը աւելի աւերակների ողորմելի կոյտ են ներկայացնում, քան թէ մի վարչական և առևտրական կենտրոնի շինութիւններ. բայց դեռ վերջին տարիներս, պատերազմից յետոյ, Կարինը լաւացել է, ասում են... Ամբողջ Կարինում (եթէ չը հաշուենք եւրոպական հիւպատոսներին) երկու կառք կայ. մինը պատկանում է մի հարուստ անդամալոյծ տաճկի, միւսը՝ մի հայի, որը վարձով է տալիս Տրապիզոն գնացող ունևոր ճանապարհորդներին իւր կոտրտած կառքը։ Այդ կառքը և ուրիշ ծառայութիւններ է անում։ Օրինակ, ինձ պատմում էին, որ մի քանի ամիս առաջ Կարին էր եկել մի յոյն ատամնաբոյժ, որը հէնց ապրում է եղել նոյն համարում, որտեղ ես այժմ։ Այդ հէքիմբաշին վարձել էր այդ կառքը և ամեն օր նստում էր նրա մէջ, առնելով հետը իւր արհեստին վերաբերեալ բոլոր պարագաները և շրջում էր քաղաքում՝ բղաւելով. «հա՛ ատամ եմ հանում, ատամ եմ բժշկում»! ինչպէս որ մեզանում կինտօները փողոցներում են շրջում՝ «ա՛յ ալուչա, ալուչա» կամ մի ուրիշ բան կանչում։ Երբ մէկը ուզում էր բժշկուել, իսկոյն կառքը կանգնում էր և փողոցի մէջ տեղում հէքիմբաշին կամ ունելիքով հիւանդի ատամն էր հանում կամ դեղ տալիս նրան ու կրկին շարունակում իւր բժշկական պտոյտը փողոցներում։

Քաղաքիս բոլոր փողոցներում, մանաւանդ հրապարակներում, շրջում են խումբ խումբ շներ ամեն չափ ու հասակի։ Դէպի այդ կենդանիները մի առանձին սէր ու յարգանք են զգում ուղղահաւատները։ Եւ զարմանալի էլ չէ։ Տաճիկները հասկացողութիւն չ՚ունին, թէ ի՛նչ է քաղաքի մաքրութեան համար առանձին ծախս անելը. նրանք պահում են այդ անթիւ շների բազմութիւնը, որպէս զի վայելելով մուսուլմանների յարգանքը և հովանաւորութիւնը՝ աճելով աճեն ու բազմանան և տներից ուղղակի փողոցները թափւող կտորտանքները ու անմաքրութիւնները և փողոցներում ու հրապարակներում մորթւող անասունների մնացորդները կամ սատկածների դիակները ոչնչացնեն։

Կարինում հազիւ 20 ծառ լինի. հասարակական զբօսատեղ, այգի կամ ծառուղի ծիծաղելի կը լինէր սպասել այս տաճկական քաղաքում. իսկ բիզ բիզ ցցուած քարերով ծածկուած գերեզմանատներ՝ ո՛րքան կամենաք։

Ճաշելու արդէն ժամանակն էր, երբ ես վերադարձայ հիւրանոցը։ Բարձրանալով երկրորդ յարկի նրբանցքը՝ ձախ կռան վերայ գտնուող մի դռնից մտայ մի փոքրիկ նախասենեակ հողի յատակով։ Այդ նախասենեակից ձախ մի դուռ ուղղակի բացւում էր դէպի մի կտուր, որը մի և նոյն ժամանակ և ճանապարհ էր դէպի խոհանոցը. իսկ ուղղակի իմ հանդէպ կախուած էր մի հին կապերտ, որ ծածկում էր ինձանից միւս կողմում գտնուող ճաշարանը։ Բարձրացնելով կապերտի մի ծայրը՝ մտայ ճաշարանը, որը գաճած պատերով միջակ մեծութեան սենեակ էր։ Ձախ կողմից երեք մեծ պատուհաններ դէպի վերոյիշեալ կտուրն էին նայում։ Սենեակում, մուտքի դէմ ու դէմ գտնուող պատի մէջ, մի քառակուսի ծակ էր բացուած դէպի խոհանոցը. կերակուրը ստացւում էր այդ ծակից։ Ճաշարանի մէջ տեղում մի մեծ սեղան էր դրած ըսպիտակ հասարակ սփռոցով ծածկած և մի քանի հին աթոռներ շուրջը։ Ճաշարանի մի անկիւնում կրակով «մանղալն» էր։ Մի քանի հոգի վերարկուներով, կրկնակօշիկներով ու ֆէսերով նստոտած սեղանի շուրջը՝ ճաշում էին։ Այս ճաշարանը Կարինի ամենաարիստոկրատիական, մաքուր և թանգ «րեստօրանն» էր. նորան պահում էր մի ախալցխացի հայ, որը իւր կերակուր պատրաստելու հմտութեան և եւրոպական ճաշակի մասին աւելի էր կարծում, քան Պարիզից Մօսկւա եկած մի որ և է երևելի ֆրանսիացի խոհարար։ Հասարակ ախալցխացի խոհարարը կարինցիներին եւրոպական ճաշակ էր սովորեցնում. на безрыбьѣ и ракъ рыба!

Ինձնից յետոյ իսկոյն ճաշարանը մտաւ Յովհաննէս աղան և սկսեցինք միասին ճաշել։ Ես նրան հարցնում էի ներկայ եղողների մասին։

Ճաշողներից երեք մաքուր հագնուած երիտասարդները տեղիս յունաց վարժարանի ուսուցիչներն էին. յոյների վարժարանը Կարինի միւս դպրոցներից ամենականոնաւորն է. ուսուցիչները պատշաճաւոր պատրաստութիւն ստացած երիտասարդներ են և ստանում են կարգին ռոճիկ ու ապրում մարդավարի։ Նրանց մօտ նստած էր դեղագործի համազգեստով մի երիտասարդ՝ նոյնպէս յոյն (հայերին Հայաստանում պաշտօն չեն տալիս)։ Բացի դոցանից նստած էին՝ մի տաճիկ ապայ, մի հայ կաթօլիկ՝ ռուսաց հիւպատոսարանի թարգմանը, անբարոյական մէկը, և մի ծեր ֆրանսիացի ինժեներ վիշապի բերանով և թրաշած զարհուրելի տգեղ դէմքով, որը իբր թէ ճանապարհների վերայ գլխաւոր հսկող ինժեներն էր, սակայն բացի հարբելուց ու ռոճիկ ստանալուց, ուրիշ ոչ մի բանով նա չէր զբաղւած, գիտենալով որ «ինժեներ» անունն էլ, ինչպէս շատ ուրիշ բաներ Տաճկաստանում, ձևի համար է։ Սեղանի մի ծայրին նստած էր մի բողոքական հայ «տօքթեօռ», նրա մօտ՝ մի արծաթաքիթ գեղեցիկ երիտասարդ, «ալաֆրանկա» մաքուր հագնւած, ֆէսը գլխին. դա մի նշանաւոր քիւրդ փաշայի որդի էր։ Նրա հայրը իբրև ապստամբ մի ցեղապետ իւր բազմաթիւ բարբարոսութիւնների համար բերւած էր Երզրում և մեծ պատւով ու ամսական 10 ոսկի ռոճիկով պահւում էր այն պայմանով, որ Կարինից դուրս չը գնայ։ Այդպէս է պատժւում Տաճկաստանում կառավարութեան դէմ քիւրդ ապստամբը. իսկ երբ քիւրդերը կամ չէրքէզները միմիայն հայոց գիւղեր են թալանում ու հրդեհում, հայեր են կոտորում ու ողջ ողջ այրում, հայ աղջիկներ ու կանայք են բռնաբարում ու առևանգում—մի թեթև պատիժ անգամ չը կայ նրանց համար։ Միայն երբ բոլոր բարբարոսութիւնների լուրը հասնում է Եւրոպային, այն ժամանակ կառավարութիւնը դիմում է իւր սովորական միջոցներին՝ ոչնչացնելու համար լուրերի անախորժ տպաւորութիւնը նրա դեսպանները յայտարարում են, որ այդ հայերի գանգատները սուտ են կամ չափազանցացրած, կամ ասում են թէ այդ մեր քրդերը չեն արել, այլ Պարսկաստանից Հայաստան անցած թափառական ցեղերը, թէև այդ լինի այնքան հեռու սահմանից, որքան օրինակ Մուշն է։

Ճաշողներից մի քանիսը գինի պահանջեցին, բայց որովհետև արգելւած էր հիւրանոցում գինի գործ ածելը, ուստի մշեցի Հաջի-Ղազարը շորերի տակին բռնած բերեց մի կուժ Խարբերդի գինի, և լցրեց ցանկացողների ջրի բաժակները։ Ամեն մէկը մի քիչ խմեց և դրեց իւր բաժակը գետնին, ոտերի մօտ, աթոռի տակ, որպէս զի ոստիկանութիւնը յանկարծ մտնելով սեղանի վերայ գինի չը տեսնի։

Ինձ զարմացրեց թէ ինչո՞ւ առհասարակ այդքան քիչ են ճաշողների թւում տէրութեան ծառայողները։ Պատճառը այն էր, որ շատ քիչերը տաճիկ պաշտօնեաներից կարողութիւն ունէին ամեն օր այս «երևելի» ռեստորանում ճաշելու։ Չը նայած որ կերակրի մի բաժինը 60 փարա արժէր (15 կոպ.), այնու ամենայնիւ շատերը միջոց չ'ունէին յաճախել ճաշարանը։ Տաճիկ պաշտօնեաները ու զինուորական ծառայողները իրանց ռոճկի միմիայն մի մասն են փողով ստանում, իսկ միւս մասի փոխարէն նրանց տալիս են մի թուղթ, ուր աստիճանի համեմատ նշանակւած են լինում այն կենսական պիտոյքները, որ իրաւունք ունի իւրաքանչիւրը նոցանից ստանալ «կօնդրատչիւ-ից (ПОДРЕДЧИКЪ)։ Օրինակ, եթէ յիսնապետը ունի իրաւունք ստանալ օրեկան մի յայտնի քանակութիւնով հաց, միս, իւղ, ձու, շաքար, թէյ, վառելիք, ձիու համար դարման, գարի և այլն, հազարապետը իւր աստիճանով աւելի բարձր լինելով աւելի մեծ քանակութիւնով է ստանում նոյն պիտոյքները։ Այսպէս դիցուք, հարիւրապետը իրաւունք ունի օրեկան 4 հաց ստանալ, հազարապետը կօնդրատչիից կը ստանայ 8 հաց և այլն։ Ամեն մի ծառայող կարող է կօնդրատչիից իւր ստանալիք պիտոյքների իրաւունքը ամբողջապէս կամ մասամբ ծախել ում կամենում է և ստանալ փոխարէնը փող։ Շատերը հէնց այդպէս էլ անում են և ստացած փողով ճաշում են հիւրանոցներում։

Ճաշից յետոյ ես առանձնացայ իմ սենեակը և մտածում էի այն օրւայ տեսածիս ու լսածիս վերայ։ Ճիշդ որ ողբալու աշխարհ է Հայաստանը և մարտիրոս ժողովուրդ է հայոց ազգը։

Կարինը, ինչպէս և Հայաստանի ամեն մի թիզ հողը, միշտ օտարները ձեռքից ձեռք են խլել.—յոյն, պարսիկ, արաբ, թուրք, թաթար և այլն Հայաստանը շինել էին ասպարէզ ամեն տեսակ բարբարոսութիւնների։ Դեռ հինգերորդ դարում Կարինը, որ երևի այն ժամանակ մի աննշան գիւղ էր, յունաց ձեռքումն էր և Անատոլի անունով զօրավարը ամրացնելով նորան քաղաք շինեց և ի պատիւ իւր Թէոդոս կայսեր—Թէոդօ-Պօլիս անունը տւեց հայկական աննշան Կարինին։ Հայաստանում գերակշռութիւն ունենալու համար Յունաց և պարսից մէջ եղած անթիւ կռիւների ժամանակ անտէր երկիրը թշնամիներից կամ մէկի կամ միւսի ձեռքն էր ընկնում, մինչև որ VII դարում հայերի գլխին մի այլ պատուհաս էլ թափւեց՝ արաբացիք, որոնք առաւել եւս մեծ բարբարոսութիւններով աւերեցին թշւառ երկիրը և խլեցին նորան յոյներից։ Արաբացիք Թէոդո-Պոլսին Արզրում՝ այսինքն երկիր ուռումների (հոռոմ, յոյն) անունը տւին։ Յոյների և արաբների մէջ պատերազմները շարունակւում էին, մինչև որ XI դարում մի աւելի եւս կատաղի թշնամի՝ թաթարները՝ թափւեցին Հայաստան։ Ողբալի Հայաստանը սարսափելի եղեռնագործութիւնների ասպարէզ դարձաւ. հայերը գունդ գունդ սկսեցին գաղթել իրանց երկրից։ Լանգթէմուրներ իրանց անգութ արշաւանքներով մի կողմից, սովը միւս՝ ամայացրին ամբողջ Հայաստանը և հասցրին նրա ժողովուրդը թշւառութեան վերջին ծայրը։ Անվերջ պատերազմներից յետոյ թաթար ցեղերից մինը (տաճիկ) XV դարում հաստատւում է Հայաստանում։ Կարինը այնուհետև դառնում է տաճկական քաղաք։ Զարմանալի չէ, որ այսքան փոփոխութիւններից յետոյ անկարելի է գտնել այժմ Կարինում որ և է հետքեր, յիշատակներ հայկական անցեալ կուլտուրայից։

Կարինը Թիւրքաց-Հայաստանի և առհասարակ Փոքր-Ասիայի ամենամեծ վարչական-առևտրական կենդրոնն է. նա Էրզրումի վիլայէթի գլխաւոր քաղաքն է։ «Վիլայէթը» կարելի է համեմատել ռուսաց նահանգների կամ աւելի ճիշդ «область»-ների հետ, որովհետև վալին՝ որին տեղական հայերը «կուսակալ» են ասում՝ վիլայէթի ընդհանուր կառավարիչը, պետը, գեներալ-նահանգապետների իրաւունքները ունի և նշանակւում է Սուլթանից։ Վալիից է կախւած վիլայէթի բոլոր վարչութիւնը և իրականապէս նորա ինքնիշխանութեան ոչ չափ կայ և ոչ սահման։ Վիլայէթը բաժանւում է «սանջակների» (округъ, уѣздъ), որոնց գլխաւոր վարչական անձինք միւթեսարիֆներն են (начальникъ округа, уѣзда. տեղական հայերը անւանում են «կառավարիչ»). սանջակին տալիս են և «միւթեսարըֆլըղ» անունը։ Սանջակում միւթեսարիֆը վալիի կատարեալ ներկայացուցիչն է. նորանից է ստանում նա հրահանգներ և նորան է զեկուցանում։ Սանջակը իւր կողմից բաժանւում է «ղէզէ»-ների (участокъ), որոնց գլխաւոր կառավարիչները գայմագամներն են (приставъ)։ Միշտ վալիի սեպհական ցանկութիւնից է կախւած նշանակել ո՞ւմ և ո՞ր պաշտօնի մէջ ուզում է։ Ղէզէն բաժանւում է «նահիյէների» (общество, волость), որոնցից իւրաքանչիւրի գլխաւոր վարչական անձը միւդիրն է, որին ընտրում է միւթեսարիֆը, իսկ հաստատում է վալին։ Ամեն մի գիւղ ունի իւր մուխտարը, որին de jure պէտք է ընտրէ ժողովուրդը, իսկ de facto ընտրում է միւդիրը։ Ամեն մի պաշտօնեայ կախումն ունի իւր դիրքով իրանից մեծից զանազան «պարագաներով»։ Փոքրը հաստատ է իւր տեղում, մինչև որ իրան հովանաւորող մեծը տաք տաք նստած է իւր տեղում։ Բայց իւրաքանչիւր պաշտօնի համար, իբրև միջոցի այնպիսի յետ ընկած տեղում պղտոր ջրի մէջ ձուկ որսալով հարստանալու՝ տնկուած են բազմաթիւ ծակ աչքեր, որոնք ոչ մի միջոց չեն խնայում հասնելու իրանց փափագներին ու տենչանքներին։ Էրզրումի վիլայէթը կազմուած է երեք սանջակներից—Կարինի, Բայազէդի և Երզնկայի. ուրեմն, ինչպէս վերևը ասածից պարզ է, դրանցից ամեն մէկում նստած է մի մի միւթեսարիֆ։ Կենդրոնական (Կարինի) սանջակի [1] միւթեսարիֆը վալիի բացակայութեան ժամանակ բռնում է նորա տեղը։ Էրզրումի սանջակը բաժանւում է հետևեալ 10 ղէզների—Կարինի դաշտը, որից արևմուտք գտնւում է՝ Դերջան. հարաւ՝ Խընուս. հիւսիս և հիւսիս-արևելք՝ Բայբուրտ, Իսպիր և Կեսգիմ, Թորթում, Քղի. արևելք՝ Բասեան. հարաւ-արևելք՝ Թօփրաք-ղալա (Ալաշկերտ) և Ղարաքիլիսէ։ Ամեն մէկը այս ղէզներից ուրեմն գայմագամլըղ է, այսինքն իւրաքանչիւրում մի մի գայմագամ է նստում։ Մենք անցանք Բասեանով, որի գլխաւոր քաղաքը Հասանղալան էր և այժմ Կարինի դաշտումն ենք, Բարձր-Հայքի կենդրոնումն։

Իմ հաւաքած տեղեկութիւններին նայած, (Տաճկաստանում կարգին վիճակագրութեան մասին նոյնքան հասկացողութիւն ունին, որքան և կարգին կառավարութեան) Կարին քաղաքում ընդամենը (մօտաւորապէս) 10000 տուն բնակիչ կայ։ Այդ թւից

2500 տուն հայ-լուսաւորչական.
120 » հայ-կաթոլիկ.
35 » հայ-բողոքական.
75 » յոյն.

իսկ մնացեալը տաճիկ։ Բայց պէտք է ի նկատի ունենալ, որ «հայ տուն» ասելով պէտք է միշտ աւելի շունչ հաշուել քան տաճիկ, որոնք չեն սիրում պսակուած եղբայրներով միասին ապրել, այնպէս որ չը նայած տաճիկների տների թուի մեծ առաւելութեան, նրանց շունչերի թիւը համեմատաբար այնքան էլ մեծ չէ հայերից։ Մօտաւորապէս կարելի է ասել, որ հայերի թիւը 26 հազար կը լինի, իսկ տաճիկներինը՝ 36 հազար, թէ արական և թէ իգական սեռը հաշուած, մօտ 8 հարիւր էլ յոյներ կը լինին, բացի այդ մի 2 հարիւր հոգի էլ պարսիկներ և այլ ազգութիւնների մարդիկ կարելի է հաշուել։

---

[1] Ինչպէս օրինակ Карсская область-ի Карсскій округъ-ը կենդրոնական округъ համարէինք։

Տաճիկները գլխաւորապէս կալուածատէրեր են, զինուորական և այլ ծառայողներ, թէև այն պաշտօնները, որոնք պահանջում են փոքր ի շատէ գիտութիւն ու ուսում, օրինակ՝ դեղագործ, բժիշկ, հեռագրատան ծառայող—օտարներ են լինում, գլխաւորապէս յոյները· որովհետև Տաճկա-Հայաստանում հայերին պաշտօն չեն տալիս։ Թիւրքերը արհեստներ չը գիտեն. Նրանց մէջ շատ են մսագործներ, կան և չնչին բաներ ծախող մանրավաճառներ։ Հայերի մեծ մասը արհեստաւորներ են, յետոյ վաճառականներ ու դրամատէրեր և սակաւ՝ ծառայողներ։ Յոյները վաճառականներ և ծառայողներ են։ Կարինում կան և պարսիկներ (աջամ), որոնք գլխաւորապէս մանրավաճառներ են։

Էրզրումը պատերազմից առաջ բացի առևտրական-վարչական կենդրոն լինելուց, նաև ամբողջ Փոքր-Ասիայի՝ Անատոլեան զօրաբաժնի՝ (կօրպուս, օրդու) գլխաւոր կայարանն էր, բայց ռուս-տաճկական պատերազմից յետոյ տաճիկները քաշուելով «չէկ գեավուրից», Թիւրքաց-Հայաստանի մէջ գտնուող զօրքի գլխաւոր կենդրոնատեղին փոխեցին Էրզրումից Երզնկայ, որը սահմանից աւելի հեռու է և Կարինից դէպի արևմուտք է գտնւում։ Այդտեղ է նստում զօրաբաժնի ընդհանուր հրամանատարը (միւշիրը) ու նրա շտաբը։ Անատոլեան զօրաբաժինը խաղաղ ժամանակը հազիւ ունի 30,000 զինուոր։ Կարինը առաջնակարգ ամրութիւն է և տաճկաց կառավարութիւնը ոչինչ չի խնայում իւր կարողացածին չափ անառիկ շինել նրան։

Գտնուելով այն մեծ ճանապարհի վերայ, որը Տրապիզոնից Պարսկաստան է տանում, և լինելով Տաճկա-Հայաստանի այն գլխաւոր կենդրոնը, ուր Հայաստանի զանազան կողմերից (Ալաշկերտ, Բայազէդ, Վան, Տիգրանակերտ, Բիթլիս (Բաղէշ), Սղերտ, Մուշ, Բալու, Խարբերդ, Արաբկեր, Չմշկածագ, Երզնկա, Խնուս, Մանազկերտ, և այլն) հաւաքւում են ամեն տեսակ բերքեր և ապրանքներ՝ Կարինը ունի նաև մեծ առևտրական նշանակութիւն· նա մի տեսակ օղակ է, որ կապում է հեռաւոր ասիական Արևելքը եւրոպական Արևմուտքի հետ։ Եթէ չը նայած իւր այդ դիրքին, նա այնու ամենայնիւ բաւականին աղքատ և ողորմելի է թէ տնտեսապէս և թէ քաղաքակրթութեան տարածման կողմից, դորա միակ պատճառը երկրիս ներկայ քաղաքական—վարչական կազմակերպութիւնն է։

Ես հետս վերցրել էի Մխիթարեանների հրատարակած Հայաստանի քարտէզը, որի վերայ փնտռում էի վերոյիշեալ տեղերը։ Նոր էի նորան ծալել և դրել ճանապարհորդական պայուսակս, երբ յանկարծ սենեակիս դուռը բացուեց և ներս մտաւ, առանց նախապէս իմացնելու, Ալի-էֆէնդի «բօլիս»-ը։ Ես զարմացած այդ յանդգնութեան վերայ, մօտեցայ նորան և հարցրի թէ ի՛նչ է կամենում։

—Հա՛, էֆէ՛նդիմ, դուք ասում էք, որ անպատճառ վա՞ղը բերեմ ձեր անցաթուղթը, սկսեց նա դանդաղ արտասանելով ամեն մի խօսքը, որ ժամանակ վաստակի իւր խորամանկ պլազ աչքերը իւր չորս կողմը պտտեցնելու և կասկածոտութեամբ սենեակիս ամեն մի անկիւնը զննելու։

—Այո՛, անպատճառ վաղը, պատասխանեցի ես, հասկանալով նրա յանկարծակի այցելութեան նպատակը։

—Հէքէթ (ի հարկէ), էֆէ՛նդիմ, հէքէթ, վաղը կը բերեմ. շա՛տ լաւ, ուրեմն կը բերեմ։ Շա՞տ ժամանակ այստեղ կը մնաք։

—Մի երկու շաբաթ, ասացի ես այնպէս ինձ ձևացնելով, որ աւելի բացատրութիւններ տալ չեմ կամենում և մտադիր եմ հանգստանալ ճաշից յետոյ։

—Շա՛տ լաւ, ուրեմն վաղը կը բերեմ, կրկնեց նա մի վերջնական քննող հայեացք ձգելով իւր չորս կողմը և հեռանալով։

Նա յանկարծակի էր մտել՝ տեսնելու ի՛նչ կասկածաւոր բան կայ մօտս և լրտեսելու—չի՞ցէ թէ մի որ և է տաճկաստանցի հայի հետ տեսնուել ու խօսել ունիմ։ Լաւ է, որ քարտէզը նա չը տեսաւ, եթէ ոչ Տաճկա-Հայաստանում ամենամեծ քաղաքական յանցանքներից մէկը Հայաստանի քարտէզ ունենալն է։ Արևը մայր մտնելու մօտ էր· ըստ տեղական սովորութեան շուտով հիւրանոցը փակուելու էր։ Ես բարձրացայ վերև թէյ խմելու։ Այնտեղ լիքն էին ամեն կարգի *հայեր, տաճիկներ և յոյներ և ծխում էին, բիլիարդ խաղում, վիճում և թէյ կամ ղայֆէ խմում։*

Ահա՛ մօտաւոր ջամիի բարձր մինարէի պատշգամբում երևաց մուէզզինը և իւր զիլ ձայնով ուղղահաւատների ազանը տուեց։ Կամաց կամաց հիւրանոցից դուրս էին գալիս մարդիկ։ Շուտով և ինքը հիւրանոցի տէրը՝ Յովհաննէս աղան՝ ինչպէս և ախալցխացի ճաշարանատէրը վերջացնելով իրանց հաշիւները պիտի կողպէին՝ մինը ընթերցարան-թէյարանը, միւսը իւր երևելի ռեստօրանը՝ և հեռանային հիւրանոցից իրանց տները՝ թողնելով «խանում» միմիայն «միսաֆիր»-ներին (հիւր) և մշեցի ծառայ հաջի-Ղազարին։

Հիւրանոցից բոլորովին գնալուց առաջ Յովհաննէս աղան մտաւ սենեակս. ես նորան պատմեցի Ալի-էֆէնդիի այցելութիւնը։ Նա վախենալով հարցրեց, թէ արդեօք մի որ է կասկածելի բան չ՚ունի՞մ իմ մօտ։ Ես ցոյց տուի Մխիթարեանների հրատարակած հին քարտէզը։ Նա զարհուրեց, ասելով թէ կորած է ինքը, եթէ բոլիսը մի այդպիսի բան տեսնի իւր հիւրանոցում և թէ լաւ է, որ մինչև նորա մըտնելը անգիտակցաբար ծածկել եմ, եթէ ոչ այդ մի ամենամեծ առիթ կը լինէր, որ պահանջէին ինձ մօտ խուզարկութիւն անելու։ Նա խնդրեց կրկին, որ խնայեմ իրան և եթէ որ և է կասկածելի թղթեր ունեմ՝ իսկոյն ոչնչացնեմ։ Ես հաւատացրի, որ աւելի ոչինչ չ՚ունիմ և հանգստացնելու համար ասացի, թէ կը թագցնեմ քարտէզը մի որ և է տեղ։ Տաճկաստանը մի կատարեալ տգիտութեան և խաւարի երկիր է. իսկ երբ տգէտի խելքում մի որ և է կասկածանք է յարուցւում, նա այն ժամանակ հասնում է մինչև սարսափելի անհեթեթութիւնների... Այո՛. «Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէ՝ յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ, յամենայն հողմոյ շարժի և յամենայն բանէ խռովի, և յամենայն իրաց դողայ. երազագէտ է այնպիսին ի կեանս իւրում, և յանգիտս կորուստն»... յուղարկէ զերկիրն իւր—աւելացնենք մենք յարմարեցնելով այս խօսքերը տաճկաց կառավարութեան բռնած ընթացքին խեղճ, հլու-հպատակ հայերի վերաբերեալ Տաճկա-Հայաստանում։

Ցուրտ, մռայլ սենեակումս վառեցի «սօբան» և, ինչպէս միշտ, վերարկուով, կրկնակօշիկներով և գլխարկով նստած մտածում էի, թէ հայերի մէջ եմ՝ բայց հայերից հեռու, Հայաստանի մէջ՝ բայց հայրենիքիս կարօտ... Տաճկա-Հայաստան գիրք մուտք չ՚ունի· ինձ յաջողուել էր հետս առնել մի ռուսերէն գիրք, որը արդէն կարդացել վերջացրել էի։ Կարելի էր նստել յիշողութիւններս գրել, բայց այդ էլ խնդրել էր հիւրանոցի տէրը չը գրել, ով է իմանում ինձ խուզարկեն, առնեն կարդան և յետոյ մի որ և է խօսքի պատճառով նրան էլ բանի մէջ ձգեն։ Խեղճը արդէն չորս տարի բանտում մնացել էր, համը գիտէր։ Մնում էր մտքումս ծրագիրներ կազմէի՝ թէ Կարինում դեռ ո՞ւմ և ի՞նչ պէտք է տեսնել։ Ամէն մի կիւրակէ իւրաքանչիւր մարդ իրաւունք ունի այցելել Սանասարեան վարժարանը, ուստի ես էլ մտադրուեցի առաջիկայ կիւրակէ օրը գնալ վսեմաշուք էֆէնդիներին և նրանց դպրոցը տեսնել· յետոյ պէտք է ներկայանայի առաջնորդին, տեսնէի «ազգային» և բողոքականների ու կաթոլիկների ուսումնարանները։

Արդէն «սօբա»-ի կրակը մարել էր և սենեակիս բոպէական չոր տաքութիւնը կրկին անցել։ Դեռ ժամի 10-ն էր, բայց ամբողջ քաղաքը քնած էր։ Անթափանցելի խաւար էր դուրսը։ Մեռելային լռութիւնը ժամանակ առ ժամանակ խանգարւում էր շների կատաղի հաչիւնով, հեռու պահականոցներից լսւող զինուորական փողի ձայնով և փողոցով անցնող, հիւրագնացութիւնից ուշ վերադարձող մարդկանց խօսակցութիւնով։ Աւելորդ էլ է նկատել, որ Կարինի փողոցներում լուսաւորութիւն չի լինում։ Գիշերը շրջողները պարտական են հետները վառւած լապտերներ ունենալ թէ ճանապարհը տեսնելու համար և թէ դորանով ցոյց տալու պահապաններին, որ իրանք գողեր կամ կասկածաւոր մարդիկ չեն, այլ «ֆաղր» քաղաքացիք։

(Կը շարունակուի)